

*ՇՈՂԻԿ ՈՍԿԱՆՅԱՆ**Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ***ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆԻ ԿՅԱՆՔԸ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

(Նվիրվում է մահվան 100-ամյա տարելիցին)

Մկրտիչ Խրիմյանի անունը սերտորեն կապված է 19-րդ դարի վերջին շրջանի ավելի քան յոթանասուն տարիների պատմության հետ, երբ նա տակավին երիտասարդ տարիքում սկսեց իր հասարակական, քաղաքական, կրոնական, գրական, հրապարակախոսական և մանկավարժական բեղմնավոր գործունեությունը:

Նրա անունը անխափելի թելերով կապված է ինչպես արևելահայ ու արևմտահայ, այնպես էլ աշխարհասփյուռ հայության քաղաքական, կրոնական, գրական ու կրթական կյանքի հետ:

Արվեստի մեջ գեղագիտական բարձր հմտությամբ ուրվանկարվել է Խրիմյանի հրաշափառ դիմանկարը, գրականության մեջ հրաշակերտվել է նրա գրական-գեղարվեստական անգուգական կերպարը, նրան են ձոնվել բանաստեղծություններ, քերթվածքներ, ներբողներ, կյանքի ու գործի մասին գրվել են բազմաթիվ գրքեր ու երկասիրություններ: Եթե Սիամանոյի դիպուկ բնորոշմամբ Խրիմյան Հայրիկը գաղափարի և ազատության ջահակիր էր, մեկ այլ բնութագրությամբ՝ Արևելքի Դերվիշ, որի առաքելությունը Հայոց աշխարհում հույս և լույս տարածելն էր, ապա «Վանգոյժ» և «Հայգոյժ» սրտահույզ և սրտամորմոք ստեղծագործությունները միանգամայն բավական էին, որպեսզի դրանց հեղինակը փառաբանվեր ու հռչակվեր որպես 19-րդ դարի Խորենացի:

Խրիմյանի կյանքն ու գործունեության փուլերը թերևս կարելի է բաժանել մանկավարժի ու գավառի լուսավորչի, քաղաքական գործչի ու հրապարակախոսի, փիլիսոփայի ու գրողի, եկեղեցականի ու բարոյագետի, սակայն, չտրոհելով նրա խորհրդավոր ու իմաստալից կյանքը, առանց երկմտելու կարող ենք ասել, որ գործունեության ինչ բնագավառում էլ նա եղել է, գործել է լավատեսական պայծառ գաղափարներով, անմնացորդ նվիրումով ու մեծ հավատով:

Իզուր չէ, որ նրա մասին Միքայել Վարանդյանը գրում է. «Առաջին արեղան էր, որ դարձավ պուրլիցիստ, հրապարակախոս, առաջին վարդապետն էր, որ մերժեց վանական ամուլ կյանքը և նվիրվեց իր բովանդակ էությամբ աշխատավոր ժողովրդին: Հայկական դեմոկրատիզմը – ռամկավարական հոսանքը չի ունեցել թերևս ավելի պերճ ու անաղարտ ներկայացուցիչ, ավելի հզոր ու համոզված ռահվիրա, քան

վրայով մտնում է Կ. Պոլիս, որտեղ կարճ ժամանակում որպես «հայաստանցի վարժապետ»՝ իր վրա է սևեռում տեղի մտավորականության ուշադրությունը: 1848 թվականին նա ուսուցչական գործունեության անցավ Խասգյուղի նորաբաց իգական վարժարանում, որն իր շուրջն էր հավաքել Կ. Պոլսի մտավորականության ընտրանին: Մ. Խրիմյանի մանկավարժական գործունեությունն ինքնանպատակ չէր. մի կողմից նա թարմություն մտցրեց և Վանից ու Տարոնից բերած կրթական նոր շունչ հաղորդեց Կ. Պոլսի համօրինակ ու դանդաղ ընթացող դպրոցական կյանքին, իսկ մյուս կողմից, հաղորդակցվելով եվրոպական կրթաշխարհում ձևավորված երիտասարդության հետ, այդ բարենպաստ միջավայրում «իր կրթութիւնն ընդլայնեց, իր գրական մշակումը ճոխացուց, մասնաւոր խնամքով մը կարդաց և ուսումնասիրեց մանավանդ Մխիթարեանց հրապարակած պատմական, բանաստեղծական արտադրութիւնները...»²:

Պոլսահայ գաղութի ազգային կյանքում զգալի դրական տեղաշարժեր էին նկատվում, և այս գործում իր նշանակալից դերակատարությունն ունէր ֆրանսիական երկրորդ հեղափոխությունը (1848 թ.), որին ականատես ու մասնակից էին եղել եվրոպական համալսարաններում ուսանող հայ երիտասարդների պատկառելի մի սերունդ՝ Խաչատուր Պարտիզպանյան, Կարապետ Ութուճյան, Հարություն Տատյան, Ստեփան Սերվերյան, Հարություն Պալյան, Նահապետ Ռուսինյան, Գրիգոր Աղաթոնյան, Նիկողայոս Ջորայան, Մկրտիչ Մյուհենտիսյան, Աբրահամ Մախաթյան, Հովհաննես Մինանյան և ուրիշներ: Նրանք վերադարձել էին երկիր ոչ միայն հարուստ գիտելիքներով զինված, այլ նաև ազատության, անկախության և հայրենասիրության ջերմ գաղափարներով տոգորված: Եվրոպայի բարձրագույն կրթօջախներում կրթություն ստացած հայ երիտասարդները, վերադառնալով երկիր, ձեռնամուխ եղան ազգը լուսավորելու և կրթելու գործին այն քաջ համոզմամբ, թե ժողովրդի բարեկեցության անհրաժեշտ նախապայմանը գիտելիքներ ձեռք բերելու մեջ է:

Դեպի Եվրոպա ծայր առած կրթասիրական շարժումները գնալով մեծ թափ էին ստանում: Այդ մասին «Հայաստան»-ը իր համարներից մեկում տեղեկացնում է. «Մարսիլիայի շոգենավով մեծ ու պզտիկ տասն և հինգ հոգիի չափ մեր ազգեն Փարիզ գանազան գիտությանց հետևելու համար մեկնեցան ասկե: Ասոնց մեկ կեսը ազնվական գերդաստաններու զավակ էին, և մեկ կեսն ալ հասարակ մարդոց զավակ, բայց քանի մը տարիեն ուսմամբ անոնք ամենն ալ համապատիվ կըլլան: Քանի մը շաբթեն՝ կլսեմք որ այսչափ մըն ալ կպատրաստվին երթալու Փարիզ անոնց խառնվելու: Քանի որ ասոնք կտեսնամք ու կլսեմք Թարգմանչաց ժամանակները մտքերնիս կուգա...»³:

Կ. Պոլսի ազգային և կառավարական շրջանակներում ազդեցիկ դիրք ունեցող մի խումբ հարուստ մեծատուններ՝ Օտյաններ, Այվաոյաններ, Տատեյաններ, Պալյաններ, Դուզյաններ և ուրիշներ, սիրով ու բարձր պատրաստակամությամբ աջակցում և հովանավորում էին արվեստի, գրականության, գիտության, կրթության ու դպրոցի գործիչներին: Նրանց եռանդագին ջանքերի շնորհիվ ձևավորվեցին Օր-

թագյուղի և Խասգյուղի, այսպես ասած, «ակադեմիա»-ները, որոնք դարձան ազգային զարթոնքի և մշակութային շարժման հզոր կենտրոններ:

Մ. Խրիմյանը հայրենաշունչ և ազգավատ իր քարոզներով, ժողովրդական համով խոսք ու գրույցներով, իր համակրելի արտաքինով, աշինքնող էությանը և մարդամոտ խառնվածքով չէր կարող չնկատվել ու չհայտնվել ազգային գաղափարաբանության և հոգևոր զարթոնքի ակադեմիաների կիզակետում: Խրիմյանը և նրա միջոցով նաև «գավառաբնակ հայությունը» ամբողջովին կլանեց պոլսահայ մտավորականության ուշադրությունը: Այս առթիվ հետաքրքիր դիտարկում ունի Ա. Փոլստյանը. «Նոր միջավայրին մեջ, տրամադրելի բոլոր միջոցներով, մամուլով և բեմով, Խրիմեան աշխատեցաւ գաւառի հայ զանգուածին հանդէպ հետաքրքրութիւն ստեղծել, անոնց ֆիզիքական ցաւերուն, առօրեայ գրկանքներուն սարսուռովը ցնցել քաղքենի հայերուն սիրտերը, և անցեալի դեմքերուն յիշատակն ու պատմական դրուագներուն ոգին վերապրեցնելով ներկային մեջ»⁴:

Մ. Խրիմյանը շուտով մտերմացավ Կ. Պոլսի հարուստ և մեծատոհմիկ ազգայինների հետ, մասնավորապես Պողոս Օտյանի և Հովհաննես Այվասյանի ընտանիքների հետ:

Հանդես գալով Կ. Պոլսի պարբերականներում՝ Խրիմյանը ուսուցչի դժվարին աշխատանքը համատեղեց հրապարակախոսության հետ, և դա նրան ինքնահաստատման և ինքնակայացման լայն հնարավորություններ ընձեռեց: Այդ ընթացքում նա ծանոթացավ և մտերմություն հաստատեց Մխիթարյան միաբանության երևելիներից՝ Արսեն Բագրատունու հետ, ով այդ օրերին գտնվում էր Կ. Պոլսում: Բագրատունուն ձոնած Խրիմյանի գողտրիկ բանաստեղծությունը տպագրվեց «Բազմավեպ»-ի 1849 թվականի հոկտեմբերի համարում:

1847 թվականի հայրենի ակութի շուրջ կատարած ճանապարհորդությունների ընթացքում ստացած իր տպավորությունները Խրիմյանը շարադրեց «Հրաւիրակ Արարատեան» չափածո ստեղծագործությունում, որը 1850 թվականին հրատարակվեց Կ. Պոլսում⁵: Գիրքը բաղկացած էր յոթ դրվագից և այն, իբրև գեղարվեստական ստեղծագործություն, այնքան էլ կատարյալ չէր, քանի որ Խրիմյանը զուտ մաքուր արվեստի կողմնակից չէր, և նրա համար գրականությունը Ա. Չոպանյանի դիպուկ բնութագրմամբ «... ամէն բանէ առաջ գործունեութեան միջոց մը եղած է, բայց իր մեջ կայ ճշմարիտ բանաստեղծ մը, որ կհայտնվի արդէն երկին մեջ...»⁶:

«Հրաւիրակ Արարատեան»-ը Մ. Խրիմյանի հայրենասիրական զգացմունքների խտացված թանձրանյութն է, որի միջոցով հեղինակը բացահայտել է իր բանաստեղծական ներաշխարհի հրաշալիքները՝ հայրենիքի հանդեպ ունեցած անսպառ սիրտ զգացմունքներով տոգորված: Գեղարվեստական մանրապատումների գեղեցիկ զուգադրումով հեղինակը իր աշակերտների հետ շրջում է Հայաստանում, որպես իմաստուն և խորագետ ուսուցիչ՝ ցույց է տալիս նրանց Հայաստանի նվիրական վայրերը և արդեն ավերակ դարձած անցյալի փառքի հուշարձանները, խնկարկում Տրդատի, Լուսավորչի, Խորենացու, Մաշտոցի, Մահակ Պարթևի և մարտիրո-

սացված հայոց մյուս մեծերի շիրիմներին, ոգեկոչում նրանց անմահ հոգիները և սրտի անհուն մորմոքով նրանց պատմում Հայոց աշխարհի դարավոր ողբերգությունների և անդառնալի կորուստների մասին: «Հրաւիրակ Արարատեանը», – գրում է Բաֆֆին, – միակ բանաստեղծությունն է մեր գրականության մէջ, որտեղ այնպէս գրաւիչ և ազդու կերպով երգում են այն բոլոր ցաւալի զգացմունքները, որոնք զարթնում են մարդու մէջ իւր հայրենիքի աւերակներին նայելու ժամանակ»⁷:

Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը հանձինս Խրիմյանի արդէն տեսնում էր հայ ժողովրդի լուսավորչին: Թերևս դա նկատի ունենալով էր, որ կրթական առաքելությամբ նրան հանձնարարվեց մեկնել Կիլիկիա: Հովհաննես Տատյանի ֆինանսական հովանավորությամբ Խրիմյանը 1851 թվականին մեկնեց Կիլիկիա: Նա պետք է կազմեր Կիլիկիայի հայաշատ գավառների դպրոցների և ընդհանրապէս կրթական վիճակի մասին ամփոփ տեղեկագիր-վիճակագրոյց, նաև ծրագրել էր վանքին կից բացել ուսումնարան՝ լուսավորություն տարածելու համար⁸: Մ. Խրիմյանը հանձնարարական նամակով ներկայանում է Սիսի կաթողիկոս Կիրակոսին և մեկ տարի շարունակ բարեխղճորեն կատարում իրեն հանձնարարված դժվարին աշխատանքը: Խրիմյանի ճանապարհորդություններն ավարտվեցին Երուսաղեմում⁹, որտեղ միառժամանակ ապրելով Մ. Հակոբ վանքում, շարադրեց իր երկրորդ «Հրաւիրակ»-ը՝ «Հրաւիրակ Երկրին Աւետեաց»-ը¹⁰, որտեղ հեղինակը գեղարվեստական գեղեցիկ մանրապատումներով ներկայացնում է բիրիական աշխարհը, Մեսիայի կյանքը և նրա տնօրինության սրբատեղերը: Այս երկու «Հրաւիրակ»-ներով Մ. Խրիմյանը ճանապարհ հարթեց դեպի գրողի, բանաստեղծի համազգային ճանաչման բարձունքը:

1854 թվականին ավարտվեց Խրիմյանի ճանապարհորդությունների շրջանը: Նա վերադարձավ իր ծննդավայրը, որտեղ նրան սպասում էր ծանր վիշտ և անդառնալի կորուստներ. մահացել էին մայրը, դեռատի կինը և դուստրը: Կտրվել էր աշխարհիկ կյանքի հետ նրան կապող վերջին թելը: Թերևս դա էր պատճառը, որ 1854 թվականին Խրիմյանը Աղթամար վանքում ընդունեց կուսակրոնություն և Վանի հոգևոր առաջնորդ Գաբրիել արքեպիսկոպոս Շիրոյանի ձեռքով ձեռնադրվեց վարդապետ՝ ամբողջովին նվիրվելով եկեղեցական, հասարակական, հրապարակախոսական, կրթական ու լուսավորական գործունեության: Իր առաջին Պատարագը Խրիմյանը մատուցեց Վանի Ս. Աստվածածին եկեղեցում՝ քարոզի բնաբան ընտրելով «Հովիքազ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց» (Հովհ. 7. 11) ավետարանական հայտնի խոսքը: Խորհրդավորություն և իմաստասիրություն արտահայտող աստվածաշնչյան սույն կարգախոսը Խրիմյանի կողմից պատահական ընտրություն չի եղել. այն պիտի լիներ նորընծա վարդապետի կյանքի ու գործի ուղենիշը, նրա կնքած անդրժեւի ուխտը, որին նա հավատարիմ մնաց իր կյանքի ողջ ընթացքում:

Մ. Խրիմյանը մեծ ծրագրեր ուներ. առաջին հերթին նա երազում էր Աղթամարը Վենետիկի Ս. Ղազար վանքի օրինակով դարձնել Վասպուրական աշխարհի գիտության ու կրթության հզոր կենտրոն՝ ստեղծել մի երկրորդ Վենետիկ Հայաստանի

սրտում: Մակայն առաջին իսկ փորձից Խրիմյանը բախվեց վանքի միաբանության անզիջում դիմադրությանը: Նույն հակազդեցությանը նա հանդիպեց նաև Վարազա վանքում, որտեղ վաղուց երազում էր հիմնել ժառանգավորաց դպրոց ու տպարան: Մակայն Վասպուրականի Արծիվը թևաթափ չեղավ. նա վերստին մեկնեց Կ. Պոլիս՝ իր ազգանվեր գաղափարները իրականացնելու անխախտ որոշմամբ:

1855 թվականին Խրիմյանը կարգվեց Կ. Պոլսի Սկյուտարի Ս. Խաչ եկեղեցու քարոզիչ: Այդ տարիներին Կ. Պոլիսը մտավոր վերածնության վերելք էր ապրում, հրատարակվում էին մեծ թվով տարատեսակ պարբերականներ, որոնց միջոցով տարածվում էին ազգային ինքնորոշման, ազգային ինքնության գիտակցության ազատախոհ գաղափարներ: Գնալով աճում էին նաև դպրոցների թիվը, մեծ աշխատանքներ էին տարվում ազգային թատրոնի հիմնադրման ուղղությամբ:

Բարեգործական ընկերությունների և մեծահարուստ ազգայինների հովանավորած դպրոցների թիվը Արևմտյան Հայաստանում 19-րդ դարի 40-60-ական թվականներին անցնում էր հարյուրից:

Վիճակագրական որոշ տվյալներով այդ շրջանում միայն Կ. Պոլսում գործում էր երեսուցից ավելի թաղային վարժարան, որոնց թիվը 50-ականների վերջին հասավ 42-ի, որտեղ սովորում էին 4376 տղա և 1155 աղջիկ երեխաներ:

Արևմտահայ մշակութային կյանքում նշանակալից իրադարձություն էր 1846 թվականին Հ. Գասպարյանի թատրոնի հիմնադրումը:

Հոգևոր մշակութային զարթոնքի այս ալեկոծումների հորձանուտում Մ. Խրիմյանն իր բարերարների նյութական աջակցությամբ Արապյան տպարանից գնեց տպագրական մի հին մեքենա և Ս. Խաչ եկեղեցուն կից հիմնեց տպարան և Պողոս Օտյանի մեկենասությամբ 1855-1856 թվականներին սկսեց հրատարակել «Արծիւ Վասպուրական» ամսաթերթը, որի հիմնական նպատակը Կ. Պոլսի հայ համայնքին գավառահայության կյանքն իր բոլոր կողմերով ներկայացնելը և նրանց ուշադրությունը ազգապահպան-հայապահպան խնդիրների վրա կենտրոնացնելն էր: Բաֆֆին Խրիմյանին նվիրված աշխատության մեջ նկատել է. «Արծիւը նշանաւոր էր իւր ջերմ, գրգռողական բնաւորութեամբ և, մինչև մոլեռանդութեան հասած, ազգասիրական ու հայրենասիրական ուղղութեամբ: Նորա գրականական այդ նոր գործունեութիւնը ստացան ընդհանուր համակրութիւն և «Արծիւը» անսպասելի կերպով տարածուեցաւ»⁸:

Թերթի տարեկան արժեքը 40 դուռուշ էր, իսկ մեկամսյա տետրակինը 4 դուռուշ: Թերթի խմբագրությունն իր մասնաճյուղերն ուներ Կ. Պոլսում, Զմյուռնիայում, Կարինում, Վանում, որոնք լուրջ աշխատանքներ էին տանում պարբերականի բաժանորդագրության և տարածման աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ: Մ. Խրիմյանն իր թերթի միջոցով մտավորականությանը կոչ էր անում՝ «Եթե կուզէք ծառը զորցնել, պետք է արմատին հոգ տանել»: Այդ կոչը անարձագանք չմնաց: Խրիմյանի նպատակը բնավ էլ Օսմանյան կայսրության մայրաքաղաքում հաստատվելը չէր: Նրա սիրտը տոչորվում էր իր հայրենիքի սիրով ու դառը

ճակատագրով, «մտաւոր խաւարի մէջ թմրած» իր ժողովրդին կրթելու և լուսավորելու անհագ տենչով: Այդ նպատակով Կ. Պոլսում նա հիմնեց «Պաշտպանողական» բարեգործական ընկերությունը և ստանալով Հակոբ Պատրիարքից կոնդակ, իսկ Բարձր Դռնից՝ հրովարտակ, նախապատրաստվեց վերադառնալ հայրենիք:

1857 թվականին Մ. Խրիմյանը վերադարձավ Վան՝ փոխադրելով այնտեղ նաև իր տպարանը: Հավաքվել էր նաև բավականաչափ գումար՝ Վարազա վանքում իր երազած Ժառանգավորաց վարժարանը բացելու համար: Նա ձգտում էր Վանը և Տարոնը արևմտահայության համար դարձնել ուսումնագիտական հզոր կենտրոն: Խրիմյանի նպատակներն իրականացան, երբ նա Վարազա վանքում նշանակվեց վանահայր: Նա ոչ միայն բացեց «Ժառանգավորաց»-ը, այլ նրան կից հիմնեց նաև գրադարան-ընթերցարան, մատենադարան-թանգարան և տպարան:

«Արծիւ Վասպուրական»-ի առաջին համարը լույս տեսավ Վարագում 1859 թվականի հունվարին:

Այստեղ սովորելու էին գալիս ոչ միայն Արևմտյան Հայաստանի քաղաքներից ու գավառներից, այլ նաև Արևելյան Հայաստանից, Պարսկաստանից և այլ վայրերից: Մովորողները գիտելիքների հետ մեկտեղ հմտանում էին նաև զանազան արհեստների մէջ: «Ժառանգավորաց»-ը տվել է անվանի մտավորականների և բարձրաստիճան հոգևորականների փառահեղ սերունդ, որոնց շարքում իրենց առաձնահատուկ տեղն ունեն

Գ. Սրվանձտյանցը, Ա. Թոխմախյանը, Տ. Տեր-Սարգսյանը, Ե. Տ. Մարգարյանցը, Խ. Խրիմյանը, Տ. Ամիրջանյանը և ուրիշներ: Կարճ ժամանակով այստեղ աշխատել է նաև նշանավոր վիպասան Բաֆֆին, որն իր վրա կրել է Խրիմյանի գաղափարաբանական ազդեցությունը: «Խրիմեանը՝ իւր ազդեցութեամբ, գրում է Բաֆֆին, ներշնչեց թէ ընտրած վարժապետների մէջ և թէ իւր աշակերտների մէջ այնպիսի մի սեր դէպի գիտութիւնը, մանաւանդ դէպի իւր անձը, մինչ բոլորը պաշտում էին նորան որպէս իդէալ: Այդ ժամանակից ժառանգեց նա «Հայրիկ» անունը: Եւ թէ ո՞րքան յառաջադիմութիւն ստացան մի քանի տարուայ ընթացքում դպրոցի աշակերտները, այդ յայտնի է նոցա յօդուածներից, որոնք տպվում էին «Արծուի» թերթերի մէջ»⁹:

Նորաբաց դպրոցի համար Խրիմյանը հիմնականում գավառից հավաքեց 30 գիշերօթիկ սաների՝ նպատակ ունենալով գավառական դպրոցների համար նրանցից ուսուցիչներ պատրաստել:

Առաջին անգամ Վասպուրականի հայոց վանքում երեխաները կրոնական առարկաների հետ մեկտեղ սովորեցին նաև լեզուներ, գիտություններ, արհեստներ ու արվեստներ:

1862 թվականին Մ. Խրիմյանը նշանակվեց Տարոնի առաջնորդ և Մուշի Մ. Կարապետ վանքի վանահայր, որը նրան հնարավորություն տվեց այստեղ ծավալել լուսավորական ու կրթական լայն գործունեություն: Որպես «Ժառանգավորաց»-ի մասնաճյուղ, Մուշում նույնպես հիմնեց գիշերօթիկ վարժարան, միաժամանակ Տարոնի Մ. Կարապետ վանք տեղափոխեց տպարանն ու մամուլը, որտեղ շուտով

հրատարակեց «Արծուիկ Տարօնոյ» թերթը, որը խմբագրում էր Գարեգին Սրվանձտյանը:

Մ. Խրիմյանն իր դպրոցական ու կրթական գործը իրականացնում էր դժվարին պայմաններում, մի կողմից՝ օսմանյան բռնապետությունը չէր հանդուրժում Հայաստանի սրտում ուսումնակրթական հզոր այս համալիրի գոյությունը, իսկ մյուս կողմից՝ տեղի հետադիմական ուժերն ամեն կերպ կասեցնում և խանգարում էին նորի, առաջադիմականի զարգացումը: Սակայն, դժվարությունների առաջ չընկրկելով, Խրիմյանը օրեցօր ընդլայնեց իր գործունեության շրջանակները: Առաջին հերթին նա ուշադրությունը կենտրոնացրեց դպրոցական ցանցի ծավալման վրա: Մ. Խրիմյանի հովանավորությամբ և Մ. Սանասարյանի տրամադրած նյութական միջոցներով 1871 թվականին Վանում բացվեց Մ. Սանդխտյան իգական վարժարանը: Ավելի ուշ բացվեցին Գայանյան և Շուշանյան վարժարանները (1880 թ.):

1868 թվականի հոկտեմբերի 20-ին Էջմիածնում Մ. Խրիմյանը ձեռնադրվեց եպիսկոպոս, իսկ մեկ տարի անց (1869 թվականի սեպտեմբերի 4-ին) ընտրվեց Կ. Պոլսի Պատրիարք՝ այդ պաշտոնում մնալով ընդամենը չորս տարի: 1873 թվականին Խրիմյանը հանդես եկավ հրաժարական ճառով, որը պատմության մեջ մնաց «Խոսք հրաժարման» անունով: Այդ մասին Սիոն արքեպիսկոպոսը գրում է. «Հրաժարման պատճառը սահմանադրութիւնն էր, որ պատրիարքը միայն գործադիր պաշտոնեայ կը դարձներ, և ոչ թէ գործադիր իշխանութիւն: Ինքը գաղափարի մարդ էր, օրենքի տառին չէր հնազանդեր, սահմանադրութիւնը կը կաշկանդեր զինքը, ինք անոր ոգիին ուխտած էր հնազանդիլ և զայն գործադրել և ոչ թէ տառին...»¹⁰:

1878 թվականին Խրիմյանը՝ որպես Բեռլինի վեհաժողովի հայ պատվիրակության նախագահ, հանդես եկավ Հայ դատի պաշտպանությամբ, սակայն ապարդյուն, քանի որ եվրոպական և թուրք դիվանագետներին, այնուամենայնիվ, հաջողվեց Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածը գլխիվայր շրջել՝ այն փոխելով 61-ի, որի հետևանքով «ինչպես գիրերը գլխիվայր դարձան, նույնպես հայկական խնդիրը գլխիվայր ընկավ»: Ականատես լինելով մեծ տերությունների դիվանագիտական խաղերին՝ Խրիմյանը վերջնականապես համոզվեց, որ «... արեւմտեան քաղաքակիրթ աշխարհին մէջ արդարութիւն հանգուցեալ է տիրապէս»:

1892 թվականի մայիսի 5-ին, երբ սուլթան Համիդի հրամանով Մ. Խրիմյանը «երկարատև ուխտագնացության» անվան տակ փաստորեն արքայազն էր Երուսաղեմում, Սուրբ Էջմիածնի պատգամավորական ժողովը միաձայն Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրեց Մկրտիչ արքեպիսկոպոս Խրիմյանին: Սա հայ ժողովրդի միաբանության և հավաքական ուժի եզակի դրսևորումներից մեկն էր:

Կաթողիկոսական ընտրությունների ժամանակ ազգային պահպանողականները ջերմեռանդորեն պաշտպանում էին Մ. Խրիմյանի թեկնածությունը և մեծ հույսեր էին փայփայում՝ նրա հայրապետության տարիներին Եկեղեցու միջոցով լուծել իրենց մշակած քաղաքական ծրագրերը: Այդ հոսանքի ազդեցիկ ներկայացուցիչներից Գ. Եվանգուլյանն իր նամակներից մեկում խանդաղատանքով է խոսում Մ.

Խրիմյանի արտաքին հմայքի և նրա առնական ու խրոխտ կեցվածքի մասին¹¹:

Ումանց կարծիքով Հայրապետական գահն ու գերապայծառ տիտղոսները ոչ միայն չավելացրին Խրիմյանի փառքի դափնեպսակները, այլ ընդհակառակը՝ դրանք, ինչ ո՛ր չավիով խամրեցրին նրա իսկական կոչումն ու առտերևութային առաքելությունը: Այդ առթիվ ուշագրավ է Տիգրան Նազարյանի հետևյալ դիտարկումը. «Եթե Հայր Ղևոնդ Ալիշանին էլ բազմերախտ Մխիթարի ժառանգները պսակեին թագով և Գերապայծառ տիտղոսով, գուցե Հայր Ղևոնդ Ալիշանն էլ ունենար մարդկային, անհատական թերություններ: Բայց Մխիթարյան գիտնական կաճառը իմացել է փայփայել, խնամել, սպասավորել ու մխիթարել իր անգուզական քանքարը և ոչ թե թագով նրա սուրբ գլուխը պսակել, գերապայծառ տիտղոսը տալ: Եթե մի խումբ մարդիկ ուղարկած չլինեին Երուսաղեմ Խրիմյան Հայրիկին, և հնչակյանները մի փոքր վաղ կատարած լինեին իրանց որոշումը՝ Երուսաղեմից Խրիմյան Հայրիկին Լոնդոն փախցնելով, նա չէր կաթողիկոսանալ, և կմնար այն խոշոր դեմքը, որ էր ըստ իս, է և այժմս, ու հավերժ էլ պիտի մնա Մեծ, պաղարյուն, պատմագիրների մանրագին նրա հույժ կենսալից սիրտ ու հոգին ուսումնասիրելուց հետո»¹²:

Մկրտիչ Խրիմյանի կաթողիկոսության շրջանը (1892-1907 թթ.) հայ ժողովրդի պատմության դրամատիկ և հարափոփոխ շրջաններից մեկն էր, երբ մի կողմից ցարական ինքնակալությունը վարում էր գաղութային կոշտ քաղաքականություն, իսկ մյուս կողմից՝ համիդյան բռնապետության ծրագրված հայահալած քաղաքականությամբ դրվում էր հայ ժողովրդի լինել-չլինելու հարցը: Այսուհանդերձ Մ. Խրիմյանի հայրապետության տարիներին կատարվեցին մի շարք բարեփոխումներ, շինարարական ու վերանորոգչական աշխատանքներ, որոնց համար նա նյութական միջոցներ հայթայթեց հարուստ ազգայիններից ու բարերարներից:

Մ. Խրիմյանը Մայր Աթոռում կատարեց վանական կյանքի մի շարք կանոնական բարեփոխումներ, վերանորոգեց Խոր Վիրապի, Սևանի, Հաղպատի, Սանահինի և Մ. Հռիփսիմեի վանքերը: Նրա նախաձեռնությամբ 1900 թվականին պեղվեց ու հայտնաբերվեց Ջվարթնոցի տաճարը, հիմնադրվեց ԱՄՆ-ի Հայոց առաջնորդական թեմը, Հայրապետական կոնդակով 1906 թվականին Խրիմյանը ողջունեց Եգիպտոսի ՀԲԸ միության հիմնադրումը և այլն:

Մ. Խրիմյանը թողել է գրական հարուստ ժառանգություն, որի մեջ առանձնահատուկ տեղ են գրավում կրոնախմբատարական բնույթի ստեղծագործությունները՝ «Հրավիրակ Արարատեան» (Կ. Պոլիս, 1850 թ.), «Հրավիրակ Երկրին Աւետեաց» (Կ. Պոլիս, 1851 թ.), «Մարգարիտ արքայութեան երկնից» (Կ. Պոլիս, 1866 թ.), «Յիսուսի վերջին շաբաթ և խաչի ճառ» (Կ. Պոլիս, 1876 թ.), «Ժամանակ և խորհուրդ իւր» (Կ. Պոլիս, 1876 թ.), «Վանգոյժ» (Կ. Պոլիս, 1877 թ.), «Հայգոյժ» (Կ. Պոլիս, 1871 թ.), «Թագավորաց ժողով» (Էջմիածին, 1909 թ.) և այլն:

Մ. Խրիմյանի գրական-ստեղծագործական ժառանգության մեջ նշանակալից տեղ են գրավում գավառահայության համար գրած մանկավարժական բնույթի ստեղծագործությունները՝ «Էրախտի ընտանիք» (Կ. Պոլիս, 1876 թ.), «Սիրաք և Սամո-

ւել» (Կ. Պոլիս, 1878 թ.), «Պապիկ և թոռնիկ» (Էջմիածին, 1894 թ.) և այլ գործեր, որոնք հայ ավանդական-նահապետական ընտանիքը պատկերող բարոյահոգեբանական խորհրդածությունների և բարոյակրթիչ գրույցների հրաշալի նմուշներ են:

Եղիշե Պատրիարք Դուրյանը, անդրադառնալով Խրիմյանի գրական ստեղծագործական ժառանգությանը, մասնավորապես գավառահայության համար գրած նրա մանկավարժական բնույթի ստեղծագործություններին, ասում է. «Հայրիկի գրուածները՝ թէև գրական արուեստի հրապոյր չունին, սակայն չենք կրնար ուրանալ թէ անոնք իրենց պարզ բայց խորունկ արտահայտութիւններուն մեջ կը պահեն բնական ու սրտառու զեղեցկութիւն մը: ... Մեր կեանքին գիրքը պիտի կարդանք իրմով, իր մէջ ծրարուած անցեալ մը վերյիշելու համար ի պատիւ մեր ցեղին: ... Զմայլեցուցիչ պիտի մնայ մեզի համար «Հայոց Հայրիկ»-ին հրամցուցած հին գինին՝ ո՛րքան ալ նոր ըլլան մեր տիկերը»¹³:

Խրիմյանի աստվածաշնորհ մուսան էր, որ Բալկանյան պատերազմի օրերին՝ դեռևս Րաֆֆու «Կայծեր»-ի լույս աշխարհ գալուց տաս տարի առաջ, կարմրավառ իր «Վանգոյժ»-ում ողբաձայն, սակայն ըմբոստ իր երեմիականով ի լուր աշխարհի բարձրացնում էր հայոց վիշտն ու ցասումը՝ ըմբոստության հրավիրակ կարդալով հայ ժողովրդին. «... Մինչև, ե՞րբ անսամ քեզ, որ ինքնագոհ մեռնիլ սորվիս. աշխարհ տըրվեցաւ այդ դասը, իւր մըցանակն առաւ դու դեռ անուս մանուկ մնացիր...»¹⁴:

Խրիմյանի մեծությունն առաջին հերթին նրա բարոյական նկարագրի, պարզ ու շիտակ, արդարամիտ ու ռամկասեր էության մեջ էր: Նա չէր ծնվել ոչ վարչական և ոչ էլ դիվանագիտական-քաղաքական գործունեություն ծավալելու համար: Այդ ասպարեզներում բացի կորուստներից նա հաղթանակներ չի ունեցել: Նրա կոչումն առավել բարձր էր՝ բնատուր առաքյալի կոչում, որն ամենուրեք պետք է քարոզեր իմաստություն, ամենուրեք տարածեր **Հույս, Լույս և Գիտություն**:

Մ. Խրիմյանը, ուղենիշ ունենալով «ամեն ինչ ժողովրդի համար և ժողովրդի տեսակետով» առաջատար գաղափարը, իրավամբ դարձավ համայն հայության սիրելին ու պաշտելին: Տակավին երիտասարդ տարիքում նրան շնորհվեց «Հայրիկ» բազմախորհուրդ և արժանահարգ անունը: Միանգամայն ճշմարիտ էր Դր. Ֆրանգյանի հետևյալ դիտարկումը. «... նա ամեն տեղ վառվում էր Հայրիկն է, հայ ժողովրդի առաջնորդը... նրա կեանքը եղել է զեղեցիկ պայքար, նա հանդիսացել է մեր հասարակական կեանքում մի անմասն մարտիկ...»:

Նրա ամեն մի ստեղծագործություն կյանքից վերցրած բարոյագիտական և իմաստասիրական արժեքավոր մտքերի ու գաղափարների ընտրանի է: Մ. Խրիմյանին արժևորելու տեսակետից ուշագրավ է նաև Լինչի՝ հետևյալ բնութագրությունը. «Խրիմյանը մտատիպն է մի բարձր քահանայի: Նա մի կերպարանք է, որ դուրս է քայլում ուղղակի Հին Կտակարանից աստուածաշնչային կրակովն և բոլոր բանաստեղծութեամբ»¹⁵:

Հայ Եկեղեցին իր բազմադարյան պատմության մեջ ունեցել է բազում լուսավորիչ և ժողովրդավար հայրապետներ, սակայն նրանցից և ոչ մեկը չի արժանացել

«Հայոց Հայրիկ» բազմախորհուրդ տիտղոսին: Ուրեմն ո՞րն է Խրիմյանի գաղտնիքը: Այս հարցին պատասխանելու համար փորձենք զուգադրել Խրիմյանին և այդ շրջանի մյուս բարձրաստիճան հոգևորականներին: Այսպես, երբ Ներսես Վարժապետյանը եռանդագին փորձում էր Հայաստանը և հայ ժողովրդին ներկայացնել խստապահանջ Եվրոպային, գրեթե նույն ժամանակաշրջանում Խրիմյանը նվիրվել էր գավառահայության լուսավորության և դպրոցաշինության ազգանվեր գործին: Մ. Իզմիրյանը, որն արդեն կրում էր «Երկայթյա պատրիարք» անվանումը, իր ժողովրդասիրությամբ, արդարամտությամբ և կրթասիրությամբ գրեթե չէր զիջում Խրիմյանին, սակայն Խրիմյանը «ամեն ինչ ժողովրդի համար և ժողովրդի տեսակետով» հայապահպան գործելակերպով դարձավ համայն հայության ընտրյալն ու պաշտելի Հայրիկը: Եթե Խրիմյանը չուներ համալսարանական կրթություն, չէր այցելել գիտության տաճարներ, խորագիտակ չէր լեզուների իմացության մեջ և այլն, ապա նրա սերնդակից մեկ այլ բարձրաստիճան հոգևորական՝ Մաղաքյա Օրմանյանը, 19-րդ դարի երկրորդ կեսի հայ իրականության խոշոր դեմքերից էր՝ գիտնական, վարչագետ, օրենսգետ, լեզվագետ, պատմագետ, ազգագրագետ, «Արմաշի դպրեվանքի» հիմնադիր, «Ազգապատում» կոթողային ստեղծագործության հեղինակ և այլն: Այսուհանդերձ ժողովուրդն իր նուրբ ներգզացողությամբ և իմաստնությամբ Խրիմյանին էր, որ բոլորովին երիտասարդ տարիքում նրան շնորհեց համայն հայության «Հայրիկ» նվիրական տիտղոսը:

Այս առթիվ Րաֆֆին գրում է. «Խրիմյանին հայոց ամբողջ ազգը «Հայրիկ» է կոչում: Աշխարհի բոլոր փայլուն տիտղոսների մեջ չը կայ մեկը, որ այդ համեստ կոչման նման բովանդակեր իւր մեջ այնքան ընդարձակ զգացմունք, սէր և յարգանք: Դա փառքի և աստիճանի տիտղոս չէ, որ պաշտոնական անշունչ թղթերով են տալիս. դա այն որդիական կոչումն է, որ բոլորում է կենդանի սրտից – մի կոչում, որ ընտանիքի անդամները տալիս են գերդաստանի գթառատ հորը: Խրիմեանը հայկական մեծ գերդաստանի հայրն է»¹⁶:

Մ. Խրիմյանի կրոնական և լուսավորական գործունեությունը պայմանականորեն կարելի է բաժանել երկու շրջանի: Եթե նրա գործունեության առաջին շրջանը համընկնում էր Սուլթան Համիդի կազմակերպած հայկական ջարդարարական քաղաքականության ժամանակահատվածին՝ ապա երկրորդ շրջանը՝ նրա կաթողիկոսության 14 տարիները, պակաս մղձավանջային չէին՝ կապված ցարական Ռուսաստանի հակահայկական գործողությունների հետ:

1903 թվականի հունիսին Կովկասի փոխարքա Գ. Ա. Գոլիցինի նախաձեռնությամբ գործի է դրվում Նիկոլայ Երկրորդի հռչակած հրամանագիրը՝ Հայոց Եկեղեցու կալվածքների և հայկական դպրոցների պետականացման մասին: Այս հրամանագրի ուժով Կովկասում և Հայաստանում գրավվեցին եկեղեցական ողջ կալվածքները, միաժամանակ փակվեցին հայկական դպրոցները: Հայ ժողովուրդն ըմբոստացավ այդ անօրինական գործողությունների դեմ և հավաքական ուժ դարձած՝ կանգնեց Հայոց Հայրիկի կողքին: Խրիմյանն աննահանջ և հերոսական պայքար ծա-

վալեց ցարական ինքնակալության այդ կամայական քաղաքականության դեմ: Առաջին հերթին հատուկ կոնդակով հոգևորականությանը կոչ արեց խուճապի չմատնվել և չենթարկվել այդ հրամանին:

Այդ օրերին Լինչին հասցեագրված նամակներից մեկում Մ. Խրիմյանը Նիկոլայ Երկրորդի հրամանագիրը որակեց իբրև «տարօրինակ օրենսդրություն», հետևաբար համարձակ և աննահանջ պայքար ծավալեց հակահայկական այդ ակցիայի դեմ: Ցարին հղած նամակներում Հայրիկն արտահայտում էր իր արդարացի վրդովմունքը՝ մատնանշելով, որ այդ օրենքն ընդունվել է առանց իր իմացության և, վկայակոչելով Հայաստանում ծայր առած ժողովրդական հուզումների և դժգոհությունների ծով ալիքը, անթաքույց գայրոյթով գրում է. «... յուզումները միայն ցույց են տալիս, թե որքան անսպասելի էր նոր հրովարտակը, որ ծանր պատժի հանգամանք ունի, թե ինչպես դա հակասում է եկեղեցու օրենքներին ժողովրդի մեջ դարերով մշակուած պատկերացումներին»¹⁷: Այս ծանր ու անհավասար պայքարում հայ ժողովուրդը հաղթեց, և 1905 թվականի օգոստոսի 1-ին հրապարակվեց ցարի նոր հրամանագիրը՝ ազգային դպրոցները վերստին բացելու և հայոց եկեղեցու գույքը վերադարձնելու վերաբերյալ: Անկասկած, այս հաղթանակի ծանրակշիռ բաժինը Մ. Խրիմյանինն էր:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի մասին շատ է խոսվել ու գրվել, նրա բազմաբովանդակ կյանքի ու գործի, մարդկային դիմանկարի մասին հյուսվել են լեգենդներ, գրվել են հուշագրություններ, դիմապատումներ ու կենսագրականներ, գիտական ամբողջական համակարգի է բերված և մանրակրկիտ լուսաբանված նրա հասարակական-քաղաքական գործունեությունը¹⁸:

1943 թվականին Վազգեն Պալճյանը (հետագայում Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոս) հրատարակեց «Խրիմեան Հայրիկը որպես դաստիարակ» գիրքը, որտեղ հանգամանորեն լուսաբանված է Մ. Խրիմյանի՝ իբրև «տիպար մտավորականի, մանկավարժի ու դաստիարակի» բարոյական դիմագիծը:

Ապագա Վեհափառ Հայրապետն իրավամբ նշում էր, որ Խրիմյան Հայրիկի մասին գրելու համար «... Պետք է գրիչը թաթախել հայ ժողովրդի հույզերու և երազանքներու ավազանին մեջ» զի Տ. Տ. Մկրտիչ Խրիմեան Հայրապետը համայն հայութեան գիտակցութեան մեջ շատոնց ի վեր փառավորված է անթառամ լուսապսակով՝ իբրև անձընտիր քաջ Հայրապետ, իբրև Դաստիարակ հայ շինականի, իբրև Նվազող Հայոց դարավոր վշտի, իբրև Ռահվիրան հայրենեաց ազատութեան...»:

Երևանի Համալսարանի հրատարակչությունը 1992 թվականին առաջին անգամ հրատարակեց Մ. Խրիմյանի երկերի ամփոփ ժողովածուն, որտեղ ընթերցողին են ներկայացված «Պապիկ և Թոռնիկ», «Դրախտի ընտանիք», «Միրաք և Սամուել», «Վանգոյժ և Հայգոյժ» բարոյախոսական և հայրենասիրական բարձրարժեք ստեղծագործությունները:

Մկրտիչ Խրիմյանը հայ մշակույթի խոշոր ներկայացուցիչ է, նա ոչ միայն բարձրաստիճան եկեղեցական է, հրապարակախոս, հասարակական ու քաղաքական

գործիչ, այլ նաև 19-րդ դարի երկրորդ կեսի դպրոցական ու կրթական գործիչ, լուսավորիչ և դպրոցավար, որը թողել է մանկավարժական գիտական ու ստեղծագործական հարուստ ժառանգություն, հայրենի ակումբում՝ Վանում, Մուշում, Տարսնում, Վարազում և այլուր ստեղծել ու կուտակել է դպրոցավարության հարուստ և ուսանելի փորձ, որոնք առ այսօր գիտական համակարգված վերլուծաբանման և լուսաբանման չեն արժանացել, մանավանդ որ դեռևս շատ գործեր մնում են տարբեր արխիվներում և կամ ցրված են ժամանակի պարբերական մամուլի էջերում, որոնք կարոտ են մանկավարժական մասնագիտական լուրջ հետազոտման ու արժևորման:

Իզուր չէ, որ 1907 թվականի նոյեմբերի 15-ին ֆրանսիական «Մերքյուր դը ֆրանս»-ում տպագրված մահախոսականում Արշակ Չոպանյանը հաստատ համոզմունքով հույս էր հայտնում, որ «Խրիմեանի կեանքն ու տիպարը ստվար հատորի մը նիւթ կրնան կազմել, և այդ հատորը օր մը պիտի գրվի անշուշտ և պիտի ամփոփէ ամենայն մանրամասնութեամբ՝ այդ եզակի դեմքին բոլոր գծերը...»¹⁹: